



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia (+374 60) 71-00-78, (+374 60) 71-00-79, int.rel@ysu.am, www.ysu.am

№ 164 « 29 » 09 2017 թ.

Արձանագրություն N 164

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի 2017թ-ի սեպտեմբերի 29-ի նիստի

Օրակարգ

1. Հայաստանի առաջին հանրապետության 100-ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպում /զեկ.՝ դեկան, պրոֆ. Գ. Պետրոսյան/:
2. ԵՊՀ Բակալավրի կրթական ծրագրերի վերամշակման վերաբերյալ հարցը /զեկ.՝ դեկան, պրոֆ. Գ. Պետրոսյան/:
3. Դասախոսների կողմից գնահատման չափանիշների վերաբերյալ հարցը /զեկ.՝ դեկան, պրոֆ. Գ. Պետրոսյան/:
4. Գիտական աշխատությունների հրատարակության երաշխավորության հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար, դոցենտ Ա. Իսրայելյան/:
5. Թեկնածուական ատենախոսության թեմաների հաստատման հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար, դոցենտ Ա. Իսրայելյան/:
6. Թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավարի փոփոխման և նոր ղեկավարի հաստատման հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար, դոցենտ Ա. Իսրայելյան/:
7. Ֆակուլտետից գործուղման մեկնած դասախոսների հաշվետվություն/ զեկ.՝ Վ. Պետրոսյան/:
8. Ընթացիկ հարցեր:

Խորհուրդը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն դեկան, պրոֆ. Գ. Պետրոսյանի հաղորդումը Հայաստանի առաջին հանրապետության 100-ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպման վերաբերյալ:
2. Հանձնարարել ամբիոնների վարիչներին ամբիոններում քննարկել և ֆակուլտետի գիտական խորհրդին ներկայացնել ԵՊՀ Բակալավրի կրթական ծրագրերի վերամշակմանն նպատակաուղղված միջոցառումները:
3. Հանձնարարել ամբիոնների վարիչներին մինչև ս.թ հոկտեմբերի 20-ը ամբիոններում քննարկել և միջոցներ ձեռնարկել քննությունների գնահատման գործընթացը կարգավորելու համար:
4. Երաշխավորել հրատարակության՝
ա/ ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկան, պ.գ.դ., պրոֆեսոր **Գ. Պետրոսյանի** «Անդրկովկասը դիվանագիտական հորձանուտում. Հայկական

պետականության վերականգնումը (1917թ. փետրվար-1918թ. հունիս)»

աշխատությունը:

բ/ ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի պրոֆեսոր **Ա. Մանուկյանի «Հայաստանի հատուկ ծառայությունները (1918-1920թթ.)»**

աշխատությունը:

գ/ Քաղաքական գիտ. թեկնածու **Ա. Սարգսյանի «Պաշտպանության բնագավառի քաղաքական-իրավական բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում» աշխատությունը:** Մասնագիտական խմբագիր քաղ. գիտ. դոկտոր Տ. Քոչարյան:

Գրախոսներ քաղ. գիտ. դոկտոր Գ. Քեոյան, քաղ. գիտ. դոկտոր Վ. Սողոմոնյան:

դ/ Իրավաբանական գիտ. թեկնածու, դոցենտ **Ա. Պետրոսյանի «Խորհրդարանական դիվանագիտություն»** դասընթացի ծրագիրը:

ե/ ԵՊՀ քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի դոցենտ, փ.գ.թ., **Լ. Վարդանյանի «Քաղաքական մշակույթ»** դասընթացի ծրագիրը:

5. Հաստատել թեկնածուական ատենախոսության հետևյալ թեմաները.

ա/ ԵՊՀ քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի ասպիրանտ Նանե Վարդանյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ **«ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության պահպանողական և նեոազատական մոտեցումները «Մեծ Մերձավոր Արևելք» նախագծի իրականացման գործընթացում», ԻԳ.00.01 «Քաղաքական գիտության պատմություն և տեսություն» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել ք.գ.դ., պրոֆեսոր Ա. Ենգոյանին:**

բ/ ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի առկա ուսուցմամբ երրորդ տարվա սպիրանտ Էրիկ Դավթյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ **վերաձևակերպել՝ «Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան տնտեսական և ռազմաքաղաքական եռակողմ համագործակցությունը 1991-2016թթ.»**, վերտառությամբ /գիտական ղեկավար պ.գ.դ., պրոֆեսոր Վ. Բայբուրդյան/:

6. ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Արսեն Ջուլֆալակյանի ատենախոսության գիտական ղեկավար պ.գ.թ., դոցենտ Վահրամ Պետրոսյանի փոխարեն հաստատել պ.գ.դ. Արսեն Ավագյանին:

7. Ընդունել ի գիտություն ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ Վ. Պետրոսյանի Քուրդիստան կատարած գործունեության հաշվետվությունը:

Խորհրդի նախագահ, պրոֆեսոր

Գ. Պետրոսյան

Խորհրդի քարտուղար, դոցենտ

Ա. Իսրայելյան

Իսկականի հետ ճիշտ է